Հաստատված է
Երևան քաղաքի ավագանու
Մշակույթի, կրթության և
սոցիալական հարցերի մշտական
հանձնաժողովի 2018 թվականի
նոյեմբերի 7-ի նիստում

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևան քաղաքի ավագանու «Մշակույթի, կրթության եւ սոցիալական հարցերի» մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կանոնակարգը մշակված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Երևան քաղաքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) պահանջների համաձայն:

2. Սույն կանոնակարգով սահմանվում է Հանձնաժողովի գործունեության նպատակը կազմավորման կարգը, խնդիրները, լիազորությունները, աշխատանքների կազմակերպման ընթացակարգը, կազմը և նրանց իրավասությունները:

3. Հանձնաժողովը ստեղծվել է Ավագանու որոշումների նախագծերի և Կանոնակարգով իրեն վերապահված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ավագանուն եզրակացություններ տալու, ինչպես նաև Ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու նպատակով:

4. Հանձնաժողովի կազմը ձևավորվում է Ավագանու անդամներից և հաստատվում Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հանձնաժողովն ունի հետևյալ կազմը.

1) Հանձնաժողովի նախագահ,
2) Հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3) Հանձնաժողովի անդամներ:

5. Հանձնաժողովի նախագահը և տեղակալը ընտրվում են Ավագանու նիստում՝ Օրենքով և Կանոնակարգով սահմանված կարգով:

6. Հանձնաժողովը կազմավորված է Կանոնակարգով սահմանված կարգով՝ խմբակցություններին հատկացված տեղերի թվաքանակին համապատասխան:

7. Հանձնաժողովին անդամակցելու, անդամների փոփոխության հարցերը լուծում է համապատասխան խմբակցությունը:

8. Հանձնաժողովը Ավագանու մարմին է և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի, սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Հանրաժողովի խնդիրներն են՝

1. նախապատրաստել Հանձնաժողովի իրավասության մեջ մտնող հարցեր՝ Ավագանու նիստում քննարկման ներկայացնելու համար.

2. աջակցել Ավագանու գործունեությանը հետևյալ ոլորտներում,

ա) մշակույթ,

բ) կրթություն,

գ) զբոսաշրջություն,

դ) երիտասարդություն,

ե) սպորտ,

զ) առողջապահություն,

է) սոցիալական ապահովություն,

ը) մայրություն եւ մանկություն,

թ) հաշմանդամություն,

ժ) աշխատանք,

ժա) զբաղվածություն,

ժբ) հասարակայնություն եւ արտաքին կապեր:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Հանձնաժողովի լիազորություններն են՝

իրեն վերապահված հարցերի շրջանակում.

1. ուսումնասիրել Ավագանու նիստերին ներկայացվող նախաձեռնություններն ու առաջարկությունները, դրանց վերաբերյալ տալ կարծիքներ ու եզրակացություններ,

2. վերահսկողություն իրականացնել.

ա. Ավագանու, ինչպես նաև Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ,

բ. Երևանի քաղաքապետի որոշումների կատարման նկատմամբ:

11. Հանձնաժողովի որոշմամբ կամ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով քաղաքապետից, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարից վարչական շրջանների ղեկավարներից, Երևանի ենթակայության կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն:

12. Հանձնաժողովն իր կազմից կարող է ձևավորել աշխատանքային խումբ (խմբեր):

IV ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում և անց են կացվում Երևանի ավագանու և սույն կանոնակարգին համապատասխան:

14. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

15. Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են ամիսը առնվազն մեկ անգամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված օրը և ժամին:

16. Երևանի ավագանու նիստի ընթացքում արգելվում է Հանձնաժողովի նիստի հրավիրումը:
17. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Երևանի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել միայն Հանձնաժողովի որոշմամբ, որի մասին Հանձնաժողովի նախագահը նախապես տեղեկացնում է Երևանի քաղաքապետին:
18. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև քաղաքապետը, քաղաքապետի առաջին տեղակալը, ավագանու անդամները և ներկայացնել առաջարկություններ քննարկվող հարցի վերաբերյալ: Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել նաև նախաձեռնության հեղինակ' ավագանու անդամը(ները):
19. Հանձնաժողովն իր նիստին կարող է հրավիրել քննարկվող հարցին առնչվող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին' իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
20. Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրվում է հրատապ քննարկում պահանջող հարցերի առկայության դեպքում:
21. Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Հանձնաժողովի նախագահի կամ անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած ժամկետում և օրակարգով:
22. Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներին իրազեկում է նիստի հրավիրման ժամկետից՝ առնվազն 3 օր առաջ:
23. Հանձնաժողովի արտահերթ նիստի օրակարգը, նրանում ընդգրկված հարցերի, որոշման նախագծի փաթեթները Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներին տրամադրում է արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:
24. Հանձնաժողովի անդամը, նիստին ներկայանալու անհնարինության դեպքում, այդ մասին նախապես տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին:
25. Հանձնաժողովի նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նախագահի և տեղակալի բացակայության դեպքում, Հանձնաժողովի որոշմամբ' նիստը վարում է Հանձնաժողովի անդամներից մեկը:
26. Արտահերթ նիստի օրակարգը ներկայացնում է հանձնաժողովի նախագահը և նիստը վարում սույն կանոնակարգի 29 կետի 1), 2), 3), 4), 5). 6) ենթակետերի համաձայն:
27. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:
28. Հանձնաժողովի հերթական նիստը սկսվում է օրակարգի հաստատումով, մինչև օրակարգի հաստատումը այլ հարցեր չեն քննարկվում:
29. Հանձնաժողովի հերթական նիստի օրակարգի հաստատումից հետո հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ.

1) Հանձնաժողովի նիստը վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ հիմնական ու հարակից զեկուցողներին,
2) հիմնական զեկուցողի ելույթը,
3) հարցեր հիմնական զեկուցողին,
4) հարակից զեկուցողի ելույթը,
5) հարցեր հարակից զեկուցողին,
6) մտքերի փոխանակություն,
7) նիստը վարողի եզրափակիչ ելույթը,

8) քվեարկություն:

30. Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է առանձին՝ այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

31. Քվեարկության է դրվում քննարկված հարցի վերաբերյալ կարծիք կամ Ավագանուն դրական եզրակացություն ներկայացնելու մասին առաջարկությունը: Եթե քվեարկության արդյունքում առաջարկությունը չի ընդունվում, ապա համարվում է, որ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը դրական կարծիք կամ եզրակացություն չի ներկայացրել.

32. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա անդամների մեծամասնությունը, բայց ոչ պակաս քան մեկ քառորդը: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի նիստերի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

33. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և ձայնագրվում: Նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև Հանձնաժողովի նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների արդյունքներն ու Հանձնաժողովի եզրակացությունը՝ ստորագրում է Հանձնաժողովի նախագահը:

34. Հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական վերլուծական և մասնագիտական գործունեությունն ապահովվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աջակցությամբ:

35. Հանձնաժողովն իր կազմից կարող է ձևավորել աշխատանքային խմբեր՝ սահմանելով նրանց խնդիրները, գործունեության ժամկետները, կարգը՝ ընտրելով խմբերի ղեկավարներին: Աշխատանքային խմբերի գործունեությունը համակարգում է Հանձնաժողովի նախագահը:

36. Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև խմբակցություններից փորձագետներ: Աշխատանքային խումբն իր գործունեության արդյունքների մասին սահմանված ժամկետում զեկուցում է Հանձնաժողովի նիստում:

37. Աշխատանքային խումբը գործում է Հանձնաժողովի սահմանած ժամկետներում և կարող է լուծարվել վաղաժամկետ՝ Հանձնաժողովի որոշմամբ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԸ, ԱՆԴԱՄԸ

38. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախապատրաստում և վարում է Հանձնաժողովի նիստերը.

2) նախաձեռնում է Հանձնաժողովի արտահերթ նիստ.

3) Հանձնաժողովին է ներկայացնում Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

4) ստորագրում է Հանձնաժողովի կարծիքը և (կամ) եզրակացությունը.

5) ներկայացնում է Հանձնաժողովն այլ անձանց հետ հարաբերություններում.

6) Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում ստացված դիմում-բողոքները և Հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն՝ ընթացք տալիս դրանց.

7) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքները մյուս հանձնաժողովների և Երևանիքաղաքապետարանի աշխատակազմի հետ.

8) համակարգում է աշխատանքային խմբի գործունեությունը.

9) Իրականացնում է Հանձնաժողովի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ,

10) Յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին Երևանի քաղաքապետին է ներկայացնում

տեղեկանք՝ նստաշրջանի ընթացքում Հանձնաժողովի նիստերից Հանձնաժողովի անդամների բացակայության մասին:

39. Հանձնաժողովի նախագահի տեղակալը

Հանձնաժողովի նախագահի բացակայության, նրա պաշտոնը թափուր լինելու դեպքում իրականացնում է Հանձնաժողովի նախագահի լիազորությունները:

40) Հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի լիազորությունները դադարում են՝

1) Նրանց, որպես Ավագանու անդամի լիազորությունները դադարելու դեպքում,
2) Հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի պաշտոնում նրանց թեկնածությունն առաջադրած խմբակցությունից դուրս գալու դեպքում,
3) Նախագահի կամ տեղակալի պաշտոնից հրաժարվելու դեպում:

41) Հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը հրաժարականի մասին դիմումը ներկայացնում են իրենց խմբակցությանը: Խմբակցության ղեկավարն այդ մասին տեղեկացնում է Երևանի քաղաքապետին, ով էլ այն հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում:

42) Հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թափուր տեղերը համալրվում են կանոնակարգով սահմանված կարգով:

43) Հանձնաժողովի անդամն իրավունք ունի.

1) Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել Հանձնաժողովի որոշման նախագծեր,
2) Հանձնաժողովի որոշմամբ՝ Ավագանու նիստերին ներկայացնել Հանձնաժողովի կարծիք և/կամ եզրակացությունը,
3) ունենալ ելույթներ, տալ հարցեր, հանդես գալ նախաձեռնություններով և կատարել առաջարկություններ Հանձնաժողովի, դրա աշխատանքային խմբերի նիստերում,
4) ընդգրկվել Հանձնաժողովի ստեղծած աշխատանքային խմբում,
5) իրականացնել Օրենքով, Կանոնակարգով, սույն կանոնակարգով եւ այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

44. Հանձնաժողովի անդամը պարտավոր է.

1) մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին, մասնավորապես՝ Հանձնաժողովի նիստերին, իսկ դրանց ներկայանալու անհնարինության դեպքում այդ մասին նախօրոք տեղյակ պահել Հանձնաժողովի նախագահին,
2) ուսումնասիրել Հանձնաժողով ներկայացված նախաձեռնությունների և որոշումների նախագծերը, առաջարկությունները, դիմում-բողոքները եւ տալ կարծիք:

37. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

45. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից հաստատվելու պահից:

46. Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն կանոնակարգում, կարգավորվում են Օրենքով և Կանոնակարգով:

47. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մկրտչյան